

Օ Ր Ե Ն Ս Գ Ի Ր Ք

(Ընդունվել է Հայաստանի Հանրապետության
Ազգային ժողովի կողմից 1998 թվականի հունիսի 17-ին)

Հոդված 9. Դատական քննության բանավորությունը

(վերնագիրը փոփ. 21.02.07 ՀՕ-98-Ն)

1. Գործի քննությունը կատարվում է բանավոր, [եթե գործի քննության այլ կարգ նախատեսված չէ սույն օրենսգրքով](#):

2. Գործի քննությունն իրականացվում է դատարանի անփոփոխ կազմով:
Գործի քննության ընթացքում դատավորի փոխարինման դեպքում գործի քննությունն սկսվում է սկզբից:

3. *(մասն ուժը կորցրել է 21.02.07 ՀՕ-98-Ն)*

4. *(մասն ուժը կորցրել է 21.02.07 ՀՕ-98-Ն)*

(9-րդ հոդվածը փոփ. 21.02.07 ՀՕ-98-Ն)

Հոդված 119. Գործի քննության հետաձգումը

1. Դատարանն իրավունք ունի հետաձգելու գործի քննությունը, եթե՝

1) գործին մասնակցող անձանցից որևէ մեկը կամ նրա ներկայացուցիչը դատարանի կողմից հարգելի ճանաչված պատճառով չի ներկայացել դատական նիստին և ներկայացրել է գործի քննությունը հետաձգելու վերաբերյալ գրավոր միջնորդություն.

2) այն չի կարող քննվել տվյալ նիստում՝ վկաների, փորձագետների կամ թարգմանիչների չներկայանալու պատճառով.

3) դա թելադրված է ապացույցներ ներկայացնելու անհրաժեշտությամբ.

4) դա թելադրված է գործին մասնակցող անձի կողմից ներկայացված լրացուցիչ ապացույցներին գործին մասնակցող այլ անձանց ծանոթանալու անհրաժեշտությամբ.

5) գործին մասնակցող անձանցից որևէ մեկը միջնորդում է տրամադրել ողջամիտ ժամկետ՝ վեճը հաշտությամբ լուծելու համար, և գործին մասնակցող մյուս անձինք չեն առարկում.

6) ներկայացվել է հակընդդեմ հայց կամ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ.

7) հայցվորը ներկայացրել է հայցի առարկան կամ հիմքը փոփոխելու վերաբերյալ միջնորդություն.

8) ավարտվել է աշխատանքային օրը, եթե օրենքով գործի քննության հատուկ ժամկետներ սահմանված չեն.

9) դատական նիստը չի կարող շարունակվել նիստերի դադարից հետո ներկա գտնվող անձանց կողմից թույլ տրվող դատական նիստի կարգի զանգվածային խախտումների պատճառով.

10) առաջին ատյանի դատարանը որոշել է գործի քննությանը ներգրավել գործին մասնակցող նոր անձ.

11) առկա են առողջական վիճակի հետ կապված կամ այլ անձնական բնույթի հարգելի հանգամանքներ, որոնք անհնար են դարձնում դատարանի կողմից գործի քննությունը.

12) առկա են օրենքով սահմանված այլ հիմքեր:

2. Գործի քննությունը հետաձգելու մասին կայացվում է [պատճառաբանված](#) որոշում:

3. Դատավարության մասնակիցները պատշաճ ձևով տեղեկացվում են դատարանի նոր նիստի ժամանակի և վայրի մասին:

4. Գործը հետաձգելուց հետո դրա նոր քննությունը վերսկսվում է ընդհատման պահից:

(119-րդ հոդվածը խմբ. 10.06.14 ՀՕ-49-Ն)

Գ Լ ՈՒ Խ 19¹

ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՁԵՑՎԱԾ ՎԱՐՈՒՅԹԻ ՎԱՐԳՈՎ

Հոդված 129¹. Պարգեցված վարույթի իրականացման կարգը

1. Դատարանները պարգեցված վարույթն իրականացնում են սույն օրենսգրքով նախատեսված գործի քննության ընդհանուր կանոնների համաձայն՝ այն հատուկ կանոնների պահպանմամբ, որոնք սահմանված են սույն գլխի դրույթներով:

129². Պարգեցված վարույթի կարգով քննվող գործերը

1. Դատարանը որոշում է կայացնում գործը պարգեցված վարույթի կարգով քննելու մասին, եթե ներկայացվել է նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը չգերազանցող գումարի բռնագանձման պահանջ:

2. Առաջին ատյանի դատարանը կարող է պարզեցված վարույթի կարգով քննել նաև այլ գործեր, եթե առկա է գործին մասնակցող բոլոր անձանց միջև՝ միմյան գործը դատաքննության նշանակելու մասին որոշում կայացնելու օրը կնքված գրավոր համաձայնություն:

3. Գործը չի կարող քննվել պարզեցված վարույթի կարգով, եթե՝

1) առկա է գործին մասնակցող անձանց, վկաներին կամ փորձագետին հարցաքննելու, փորձաքննություն նշանակելու, ապացույց պահանջելու, ապացույց գտնվելու վայրում հետազոտելու կամ դատական հանձնարարություններ տալու անհրաժեշտություն.

2) դատարանը վարույթ է ընդունել հակընդդեմ հայց կամ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձի հայց.

3) առկա է գործի քննությանն այլ անձանց ներգրավելու անհրաժեշտություն.

4) անհրաժեշտ է որոշել գործին մասնակցող անձանց կողմից չվկայակոչված, սակայն գործի լուծման համար նշանակություն ունեցող այլ փաստեր:

4. Մեկ հայցադիմումում միացված մի քանի փոխկապակցված պահանջներով գործը, եթե այդ պահանջներից մեկը ենթակա է քննության պարզեցված վարույթի կարգով, իսկ մյուսը՝ ընդհանուր հայցային վարույթի կարգով, դատարանը քննում է ընդհանուր հայցային վարույթի կարգով՝ բազառությամբ այն դեպքերի, երբ սույն օրենսգրքի 89-րդ հոդվածով սահմանված կարգով միացված պահանջներն առանձնացնում է առանձին վարույթներում:

129³. Գործը պարզեցված վարույթի կարգով քննելու մասին դատարանի որոշումը

1. Դատարանը պատասխանողից հայցադիմումի պատասխան ստանալու, իսկ այն չներկայացվելու դեպքում՝ պատասխան ուղարկելու համար սահմանված ժամկետն ավարտվելու օրվան հաջորդող յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում գործը պարզեցված վարույթի կարգով քննելու մասին, որում նշվում է վճռի հրապարակման վայրի և ժամանակի մասին:

2. Սույն հոդվածի 1-ին մասում սահմանված ժամկետի ավարտից հետո դատարանը կարող է գործը պարզեցված վարույթի կարգով քննելու մասին որոշում կայացնել, եթե սույն օրենսգրքի 129.2-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված համաձայնության մասին դատարանն իրազեկվել է սույն հոդվածի 1-ին մասում սահմանված ժամկետը լրանալուց հետո:

3. Գործը պարզեցված վարույթի կարգով քննելու մասին դատարանի որոշումը ոչ ուշ, քան այն կայացնելու հաջորդ օրն ուղարկվում է գործին մասնակցող անձանց:

129⁴. Գործը պարզեցված վարույթի կարգով քննելու մասին դատարանի որոշումն ստանալուց հետո գործին մասնակցող անձանց կողմից կատարվող գործողությունները

1. Գործին մասնակցող անձանց նյութաիրավական պահանջների և առարկությունների հիմքում ընկած փաստերը և դրանք հիմնավորող ապացույցները, ինչպես նաև միջնորդությունները պետք է ներկայացվեն գործը պարզեցված վարույթի կարգով քննելու մասին դատարանի որոշումն ստանալու օրվանից ոչ ուշ, քան երկշաբաթյա ժամկետում: Ելնելով գործի առանձնահատկություններից՝ գործին մասնակցող անձի միջնորդությամբ նշված ժամկետը կարող է երկարաձգվել դատարանի որոշմամբ:

2. Պարզեցված վարույթի շրջանակներում հակընդեմ հայց կարող է ներկայացվել սույն հոդվածի 1-ին մասում սահմանված ժամկետում:

3. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետների խախտմամբ վկայակոչված փաստերը հաշվի չեն առնվում, իսկ դատավարական փաստաթղթերը և ապացույցները դատարանի որոշմամբ վերադարձվում են դրանք ներկայացնող անձանց՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք վկայակոչողը (ներկայացնողը) հիմնավորում է սահմանված ժամկետում տվյալ փաստը վկայակոչելու, դատավարական փաստաթուղթը կամ ապացույցը ներկայացնելու անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով:

4. Գործը պարզեցված վարույթի կարգով քննելու մասին դատարանի որոշումը կայացվելու պահից հայցի առարկան կամ հիմքը փոփոխել չի թույլատրվում:

129⁵. Գործը պարզեցված վարույթի կարգով քննելու կարգը և ժամկետները

1. Գործի քննությունը պարզեցված վարույթի կարգով իրականացվում է առանց դատական նիստ հրավիրելու:

2. Դատարանը պարզեցված վարույթի կարգով գործի քննության արդյունքում գործով դատական ակտը կայացնում և հրապարակում է սույն օրենսգրքի 129⁴-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետն ավարտվելուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

3. Դատարանը պարզեցված վարույթի կարգով գործի քննության ընթացքում կարող է փոփոխել վճռի հրապարակման վայրը և ժամանակը:

129⁶. Պարզեցված վարույթը դադարեցնելը

1. Եթե սույն օրենսգրքի 129²-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված հանգամանքներն ի հայտ են եկել գործը պարզեցված վարույթի կարգով քննելու մասին որոշումը կայացնելուց հետո, բայց ոչ ուշ, քան գործով դատական ակտը

հրապարակելու, դատարանը որոշում է կայացնում գործն ընդհանուր հայցալին վարույթի կարգով քննելու մասին և սույն օրենսգրքի 22²-րդ գլխով սահմանված կարգով գործը նախապատրաստում է դատաքննության:

129⁷. Պարզեցված վարույթի կարգով քննվող գործով դատական ակտը

1. Պարզեցված վարույթի կարգով կայացված վճռի պատճառաբանական մասում նշվում են դատարանի կողմից պարզված գործի հանգամանքները, ապացույցները, որոնց վրա հիմնված են դատարանի հետևությունները, այս կամ այն ապացույցները մերժելու փաստարկները, ինչպես նաև այն օրենքները և այլ հրավական ակտերը, որոնցով դատարանը ղեկավարվել է վճիռ կայացնելիս:

2. Պարզեցված վարույթի կարգով կայացված վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից 15-օրյա ժամկետում:»: